# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՌԱԶՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ $X^{Բ}$ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017-2018 ուստարի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2017 թվականի սեպտեմբերի 6 - ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի Ռուդիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10Հ դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Շ. Հարությունյանը և տնօրենի մասնագիտացված կրթական ուսակցության գծով տեղակալ Լ. Տերյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն

2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական պայմանների ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/.

1 Լսեցին

Ելույթ ունեցավ դասղեկ Շ. Հարությունյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը

Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 10 դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով

Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն

Նախագահի թեկնածու առաջադրվեց Թեհմինե Պետրոսյանը, որից հետո կատարվեց քվեարկություն. 5 կողմ, 0 դեմ ձայնով Թեհմինե Պետրոսյանը ընտրվեց նախագահ:

Որոշեցին.

10Հ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով

1. Պետրոսյան Թեհմինե /նախագահ/

2. Ավագյան Աննա /անդամ/

3. Ավագյան Լիլիթ /անդամ/

4. Բադալյան Մանուշակ /անդամ/

5. Խաչատրյան Թեհմինե /անդամ/

2. Լսեցին

Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աջակցությունների կազմակերպման հարցը:

Զեկուցեց Ծ. Հովհաննիսյանը: Նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն սոցիալական պաշտպանության կարիք ունեցող երեխաների կրթական հիմնախնդիրների լուծում:

Զեկուցեց, որ դպրոցի ծնողները պետք է աջակցեն դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթության իրականացման, սովորողների ուսման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և ծնողներին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր/գրենական/, օրագրեր/գրենական պիտույքներ,ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին ձեռք բերելու անհրաժեշտ գրենական տետրեր,կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը

3. Լսեցին

Ընթացիկ հարցեր /Հաճախումների,համազգեստի,կարգապահության/

Զեկուցեց Ծ. Հովհաննիսյանը: Նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը ապահովված է ուսուցիչներով: Դասերը սկսվելու են $9^{00}$, ավարտվելու են $15^{00}$-ին: Ծնողները հորդորել ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ: Նշեց, որ աշակերտները դպրոց հաճախեն պատշաճ տեսքով, դասագրքերով, օրագրերով և դպրոցական համազգեստով: Անթույլատրելի են դպրոցի ներքին կարգապահական կանոնների և աշակերտական վարքագծի խախտումները դպրոցում: Պետք է ծնող-դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողություն սահմանելու նպատակով

Որոշեցին

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն պատշաճ կեցվածքով, լինեն կարգապահ և ջանասեր աշակերտ

Ծնողական խորհրդի նախագահ /Ժ. Գևորգյան /

Քարտուղար /Ա. Ավագյան /

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2017 թվականի նոյեմբերի 8 - ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10ա դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Շ. Հարությունյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Առաջադիմությանը վերաբերող հարցեր:
2. Կարգապահական խնդիրներին առնչվող հարցեր:

1.Լսեցին.

Ելույթ ունեցավ դասղեկ Շ. Հարությունյանը՝ իր դժգոհությունն արտահայտելով նոր ուսումնական տարում աշակերտների առաջադիմության վերաբերյալ: Դասղեկը նշեց, որ որոշ աշակերտներ դասերին ներկայանում են ոչ լիարժեք պատրաստված և ցուցաբերում են անտարբեր վերաբերմունք առարկաների հանդեպ: Դասղեկ Շ. Հարությունյանը ընդգծեց, որ դասարանում թույլ ընդունակություններ ունեցող, անկարող աշակերտներ չկան, բայց ափսոսանք հայտնեց, որ նրանք լիարժեք չեն օգտագործում իրենց ունակությունները: Նա ծնողներին հորդորեց առավել ուշադիր լինել, հետևել, որ իրենց երեխաները դպրոց հաճախեն տանը դասերը պատրաստած և դասերին մեծ հետաքրքրություն և ակտիվություն ցուցաբերեն առարկաների հանդեպ:

Որոշեցին.

Ծնողները որոշեցին մեծ ուշադրություն դարձնել, որ աշակերտները դպրոց հաճախեն դասերը տանը պատրաստած և հետևողական լինեն, որ աշակերտների առաջադիմության որակը բարձրանա:

2.Լսեցին.

Դասղեկ Շ. Հարությունյանը անդրադարձավ դասարանի կարգապահական խնդիրներին, սովորողների պահվածքին դասաժամերին և դասամիջոցներին: Նշեց, որ հատկապես տղաների շրջանում նկատվում է ակտիվություն: Երբեմն միջանձնային հարաբերություններում նկատվում են կոնֆլիկտներ, որոնք հարթվում են առանձին զրույցների միջոցով: Շ. Հարությունյանը ծնողների ուշադրությունը հրավիրեց սոցիալական ցանցերում աշակերտների ակտիվության վրա՝ ընդգծելով դրա բացասական հետևանքները:
Շ. Հարությունյանը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, վերահսկել նրանց գործողությունները սոցկայքերում, վերահսկել նաև արարքները, անցանկալի երևույթների դեպքում դիմել նաև դասղեկին՝ միասին իրավիճակը շտկելու համար:

Որոշեցին.

Ծնողների և դասղեկի համատեղ աշխատանքի շնորհիվ լուծել սովորողների կարգապահական խնդիրները:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Թ. Պետրոսյան /

Քարտուղար՝ /Ան. Ավագյան /

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**2018 թվականի հունվարի 26-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10ª դասարանի ծնողական ժողովը:**

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Շ. Հարությունյանը :

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

**1.** Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:

**2.** Երկրորդ կիսամյակի անելիքները և ծրագրերը:

**3.** Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, ներթափանցություն/:

**1.Լսեցին.**

Ելույթ ունեցավ դասղեկ Շ. Հարությունյանը՝ ներկայացնելով առաջին կիսամյակում աշակերտների ցուցաբերած արդյունքները: Նա նշեց, որ դասարանում կան բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներ, սակայն առաջին կիսամյակում գերազանցիկ չկա, ինչպես նաև չկա անբավարար գնահատական ունեցող աշակերտ: Դասղեկը ընդգծեց, որ աշակերտները մի փոքր դժվարանում են հաղթահարել <<Հանրահաշիվ>> և <<Երկրաչափություն>> առարկաների բարդությունը, սակայն հույս հայտնեց, որ առավել շատ աշխատելու դեպքում այդ խնդիրն էլ կհաղթահարվի աշակերտների կողմից: Շ. Հարությունյանը հորդորեց ծնողներին առավել ուշադիր լինել աշակերտների առաջադիմության հարցում:

Որոշեցին.

**Ծնողները որոշեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել, որ աշակերտները դպրոցական դասերը տանը պատրաստած և ինքնուրույն լինեն, որ բացթողումները լրացվեն երկրորդ կիսամյակում:**

2.Լսեցին.

Դասղեկ Շ. Հարությունյանը նշեց, որ երկրորդ կիսամյակում նախատեսվում են բաց դասեր, միջոցառումներ, էքսկուրսիաներ, որոնց աշակերտների մասնակցությունը պարտադիր է: Շ. Հարությունյանը նշեց, որ բաց դասերը, միջոցառումները աշակերտներին հնարավորություն են տալիս ավելի մեծ ծավալով հաղորդակից լինել թեմայի բովանդակությանը, հեղինակների ստեղծագործություններին, ազգային սովորույթներին, իսկ այցելությունները թանգարաններ, կինոթատրոններ աշակերտների մոտ ձևավորում են գեղագիտական ճաշակ:

Որոշեցին.

Ծնողները որոշեցին բոլոր նպաստավոր պայմաններն ապահովել, որ աշակերտները ակտիվ մասնակցություն ունենան և հավուր պատշաճի ներկայանան դասերին:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Թ. Պետրոսյան /

Քարտուղար՝ /Ան. Ավագյան /